ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/1

Ք.Եղեգնաձոր Շահումյան 5 ՀՀ Վայոց ձորի մարզպետարան

28.03.2017 թ.

Ժամը 15:00

ՎՁՄՇՀ ԱՊՁԲ-15/8-06/17 ծածկագրով /էլեկտրոնային եղանակով/ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

Նիստին մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ**՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մելսիկ Հարությունյանը

**Հանձնաժողովի անդամներ**՝

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Նարինե Մաղաքյանը,

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ Ռուզաննա Հախվերդյանը

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանստնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Աննա Սաֆարյանը

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Հայկ Կարապետյանը

**Հանձնաժողովի քարտուղար**՝ աշխատակազմի ֆինանսական և սոցիլ- տնտեսական զարգացման վարչության պետ Շահեն Վարդանյանը

1. ՎՁՄՇՀ ԱՊՁԲ-15/8-06/17 ծածկագրով հայտերի բացման մասին :

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի նախահաշվային գինը 211200/ երկու հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ:Գնային առաջարկ պարունակող ծրարները բացվել են www:armeps.am էլեկտրոնային մրցույթային համակարգի միջոցով ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի վարչական շենքում՝ ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 հասցեում:

**2.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները/անունները/ և հասցեները**

Սահմանված կարգով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները

| N | Մասնակցի անվանումը | Գրանցման վայրը ՀՎՀՀ | Չափաբաժնի համարը, որի համար հայտ է ներկայացրել |
|---|---|---|---|
| 1 | Նորմա -պլյուս ՍՊԸ | normaarminco.com 00053663 | 2,3 |
| 2 | ԱՐՆԱՐ ՍՊԸ | phsupport@mail.ru 09104264 | 1,2,3,4,5 |

3. Տվյալներ սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտերը կազմելու և ներկայացնելու մասին՝

__ <<Նորմա -պլյուս>> և << ԱՐՆԱՐ >> ՍՊԸ-ների կողմից հայտը կազմված և ներկայացված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

**4.Տվյալներ՝ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

ՎՁՄՇՀ ԱՊՁԲ-15/8-06/17 ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով Նորմա -պլյուս ՍՊԸ **-ն** ներկայացրել է դիմում, գնային առաջարկ, ինչպես նաև սահմանված հայտարարություններ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության ,մասնագիտական փորձառության , տեխնիկական միջոցների,ֆինանսական միջոցների և աշխատանքային ռեսուրսների մասին:

ՎՁՄՇՀ ԱՊՁԲ-15/8-06/17 ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով ԱՐՆԱՐ ՍՊԸ -ն ներկայացրել է դիմում, գնային առաջարկ, ինչպես նաև սահմանված հայտարարություններ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության ,մասնագիտական փորձառության , տեխնիկական միջոցների,ֆինանսական միջոցների և աշխատանքային ռեսուրսների մասին:

**5. Տվյալներ՝ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի ՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

<< Նորմա -պլյուս >> և << ԱՐՆԱՐ >> ՍՊԸ-ների կողմից մրցույթին ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

**6.Յուրաքանչյուր մասնակցի ռաջարկած գները՝**

<< Նորմա -պլյուս >> ՍՊԸ-ի առաջարկած գները

| Չափաբաժնի համարը | Ապրանքի անվանումը | Արժեք/ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումար/ | ԱԱՀ | Առաջարկված ընդհանուր գինը/ տառերով ևթվերով/ |
|---|---|---|---|---|
| 2 | Լուսապատճենահանող սարքերի տոներ | 9250 | 1850 | 11100/տասնմեկ հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ |
| 3 | Ֆլեշ հիշողություն 8GB | 34875 | 6975 | 41850/քառասունմեկ հազար ութ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ |

<< ԱՐՆԱՐ >> ՍՊԸ-ի առաջարկած գները

| Չափաբաժնի համարը | Ապրանքի անվանումը | Արժեք/ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումար/ | ԱԱՀ | Առաջարկված ընդհանուր գինը/ տառերով ևթվերով/ |
|---|---|---|---|---|
| 1 | Տոներ լազերային տպիչների | 49800 | - | 49800/քառասունինը հազար ութ հարյուր / ՀՀ դրամ |
| 2 | Լուսապատճենահանող սարքերի տոներ | 11000 | - | 11000/տասնմեկ հազար/ ՀՀ դրամ |
| 3 | Ֆլեշ հիշողություն 8GB | 42000 | - | 42000/քառասուներկու հազար/ ՀՀ դրամ |
| 4 | Մկնիկ համակարգչային լարով | 24900 | - | 24900/քսանչորս հազար ինը հարյու / ՀՀ դրամ |
| 5 | Ստեղնաշար ստանդարտ 104 կոճակով | 15000 | - | 15000/տասնհինգ հազար/ ՀՀ դրամ |

**7.Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ**

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10 փետրվարի 2011թ N168-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետը ՎՁՄՇՀ ԱՊՁԲ-15/8-06/17 ծածկագրով մրցույթին հայտը ներկայացրած ՝

— << ԱՐՆԱՐ >> ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և 1,4,5-րդ չափաբաժիններով **առաջին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել << ԱՐՆԱՐ >> ՍՊԸ -ին , որպես հրավերի պահանջների բավարարող նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

— <<Նորմա -պլյուս >> ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և 2,3-րդ չափաբաժիններով **առաջին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել << Նորմա -պլյուս >> ՍՊԸ -ին , որպես հրավերի պահանջների բավարարող նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

— << ԱՐՆԱՐ >> ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և 2,3-րդ չափաբաժիններով երկրորդ **տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել << ԱՐՆԱՐ >> ՍՊԸ -ին , որպես հրավերի պահանջների բավարարող մասնակից:

**8. Այլ անհրաժեշտ տեղեկություններ՝**

Հայտի գնահատումը իրականացվել է www:armeps.am էլեկտրոնային մրցութային համակարգով,գնման հայտի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել ,գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտանաբերվել:

ՎՁՄՇՀ ԱՊՁԲ-15/8-06/17 ծածկագրով կազմակերպված մրցույթին ներկայացված հայտերի գնահատման արդյունքների հիման վրա գնահատող հանձնաժողովը

որոշում է՝

1. ՀՀ կառավարության 10 փետրվարի 2011թ N168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի առաջին ենթակետի պահանջների համաձայն հարցում ներկայացնել ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:
2. ՀՀ կառավարության 10 փետրվարի 2011թ N168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի երկրորդ ենթակետի պահանջների համաձայն ծանուցում ուղարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին պատվիրատուին ներկայացնելու որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

3..Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան քան ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացությունը ստանալու հաջորդ աշխատանքային օրը:

Հանձնաժողով՝ Մ.Հարությունյանը
Հ.Կարապետյան
Ռ.Հախվերդյան
Ն.Մաղաքյան
Ա.Սաֆարյան

Քարտուղար՝ Շ.Վարդանյան